ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Լրացավ «Պատմա-բանասիրական հանդեսի» քսան տարին: Մեր եռամսյա պարբերականը, որ հիմնադրվել է 1958 թ., նպատակ է ունեցել օժանդակել հայագիտության և նրա հետ առնչվող գիտությունների (կովկասագիտության, արևելագիտության, բյուզանդագիտության) զարգացմանը:

Իր գոյության քսան տարիների ընթացքում պարբերականն արծարծել է հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, արվեստի ու փիլիսոփայության բնագավառներին վերաբերող բազմազան հարցեր, լուսաբանել է կովկասագիտության, ընդհանուր պատմագիտության ու բանասիրության մի շարք տեսական խնդիրներ, բացահայտել է Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային դարավոր կապերը հարևան և ուրիշ ժողովուրդների հետ, ընթերցողներին ծանոթացրել է Սովետական Հայաստանի գիտության ու մշակույթի նվաճումներին և սփյուռքահայության քաղաքական-հասարակական ու մտավոր կյանքին:

Հանդեսի էջերում տպագրվել են, օրինակ, ուսումնասիրություններ Ուրարտուի պատմության, հայ ժողովրդի կազմավորման, հայ գրականության սկզբնավորության, հայ էթնոսի կազմավորման, հնագույն հայկական բազավորությունների, հայ բարբառների դասակարգման, վաղ միջնադարյան հարտարապետության, ազատագրական շարժումների, հայ գրական և հասարակական հոսանքների, հայոց պատմության կեղծարարների, Հայաստանի և Ռուսաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Լեհաստանի, Հունգարիայի պատմական ու մշակութային կապերի, հայ գաղթօջախների վերաբերյալ: Հրապարակվել են հոդվածներ անցյալի ու ժամանակակից ականավոր հայ գիտնականների մասին (Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Մխիթար Գոշ, Հովսեփ Օրբելի, Մանուկ Աբեղյան, Հակոբ Մանանդյան, Հրաչյա Աճառյան, Գրիգոր Ղափանցյան, Նիկողայոս Ադոնց, Թադևոս Ավդալբեգյան, Աշոտ Հովհաննիսյան և ուրիշներ): Հատուկ ուշադրություն է նվիրվել հայ գրականության և արվեստի երախտավորների (Ֆրիկ, Երզնկացի, Սայաթ-Նովա, Աբովյան, Թումանյան, Կոմիտաս, Սարյան, Իսահակյան, Դեմիրճյան, Տերյան, Զարենց և ուրիշներ) կյանքի ու ստեղծագործության տարբեր կողմերը լուսաբանող նյութերին: Հրապարակվել են մի շարք ականավոր հայագետների և հայ գրականության ու արվեստի նշանավոր դեմքերի անտիպ գործերը:

«Հանդեսի» էջերում ծավալված քննարկումները յուրովի նպաստել են ստեղծագործական բանավեճերին, գիտական հարցերի մարքս-լենինյան լուսաբանությանը, պատմագրական մի շարք հանգուցային խնդիրների պարզաբանմանը:

Տպագրվել են աղբյուրագիտական նորույթներ, հնագիտական պեղումների արդյունքներն ամփոփող նյութեր, նորահայտ մատենագրական և արխիվային կարևոր փաստաթղթեր:

Պարբերականը պատշաճ տեղ է հատկացրել նաև գրախոսություններին ու գիտական ինֆորմացիային, արձագանքել է կարևոր հոբելյաններին և հաղորդումներ է տպագրել միջազգային կոնգրեսների, գիտական կոնֆերանսների մասին:

Մեր պարբերականի էջերում հանդես են եկել սովետահայ նշանավոր հայագետներ, անվանի գիտնականներ Մոսկվայից, Լենինգրադից, Թբիլիսիից և Բաքվից, Քիշինևից ու Սովետական Միության այլ քաղաքներից, ինչպես նաև Բուլղարիայից, Ռումինիայից, Չեխոսլովակիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ֆրանսիայից, Իտալիայից, Նորվեգիայից, Իրանից և այլ երկրներից:

Զանազան երկրներից ու քաղաքներից ստացված բազմաթիվ նամակները, սովետական և արտասահմանյան թերթերի ու ամսագրերի տպագրած դրվատական հոդվածները խոսում են «Հանդեսի» վայելած հեղինակության մասին:

«Պատմա-բանասիրական հանդեսի» երրորդ տասնամյակի շեմին խմբագրությունը ուզում է հավաստիացնել ընթերցողներին, որ այսուհետև էլ իր շուրջը համախմբված անվանի հայագետների, կովկասագետների և արևելագետների օգնությամբ չանի չի խնայի ավելի բարձրացնելու «Հանդեսի» գիտական մակարդակը, առավել բովանդակալից ու հետաքրքիր դարձնելու մեր պարբերականը: